


կան եօթ հարիւր բուր, նպաստ ապ կրեանի
Կոնստանտնուպոլիս միջոցով այլի տիկին Արտիկան-
ցին և պ. Մ. Պալեանցին:

Ա Ջ Դ.

Ի ԳԻՒՄՆԷ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այսու յայտարարի ի գիտութիւն Գե-
րապատիւ Առաջնորդաց, Կոնստանտնուպոլիս,
Բարեշնորհ փոխանորդաց, Հոգեւոր կառավա-
րութեանց, Գործակալաց և համայն հոգեւոր
և աշխարհիկ դասու մերազնեից եթէ ՆՈՐԻՆ
ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ ՀՈԳԵԻՈՐ ՏԷՐՆ Ազգիս
ի նկատ առեալ զբաղմանի բողոքս արառն-
ջըս և անբաւականութիւնս վերաբերեալս ա-
պօրինի և աննիւրիս պատկաց, անվայել և ան-
պատշաճ վարմանց Տաճկահայաստան Խաչա-
տուր քահանայի Տէր Յարութիւնեանց Զորուկ
գեղջ Ալաշկերտացոյ ի վիճակս Կարուց և
Ազգայնադրացոյի, իսպառ կարգադրել
արար ի քահանայական կոչմանէ և աստիճանէ
զմիշեալ Խաչատուրն Տէր Յարութիւնեանց:

Աւստի ուր ուրեք և պատահեցի յիշ-
շեալ կարգադրելն, չձանաչել զնա որպէս
քահանայ և կատարող հոգեւոր պաշտամանց և
օրինակատարութեանց այլ սոսկ աշխարհիկ ոմն:



ԿՐՕՆԱԿԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Ա.

ԱՌԱՆՅ կրօնական կեանքի ի զուր է
մեր եկեղեցու հոգեւոր վերածնու-
թեան մասին մտածել. ժողովրդի բարոյական

և հոգեւոր շարժման գիտութեան և քաղա-
քակրթութեան առողջ զարգացման առաջին
պայմանը կրօնական վերակենդանութիւնն է:
Այս միտքը շատ անգամ շօշափել ենք Արա-
րատի էջերում. ներկայիս կամենում ենք
առանձին խորհրդածութեան նիւթ դարձնել
թէ ի՞նչ է նշանակում կրօնական անձնաւո-
րութիւն լինել որով և յոյս ունինք թէ
մեր բնիկեցողներն համար կարգուի այն
խնդիրը, թէ որքան իրաւունք ունինք այդ
միտքը իրրեւ ճշմարտութիւն քարոզելու:

Մի քանի խօսքով պարզենք նախ թէ
ինչ է կրօնը որպէս զի աւելի գիւրութեամբ
կարողանանք պատասխանել թէ ի՞նչ է նշա-
նակում կրօնական անձնաւորութիւն լինել:
Մարդու և Աստուծոյ յարաբերութիւնն է
կրօնը. նա ծագում է այն հաւատից, թէ
կայ մէկը, որ տիեզերքի և մեր ներքին աշ-
խարհի Տէրն ու Կառավարիչն է: Ասածուն
որոնել ու գտնել Աստուծով յուսալ սիրել
ապրել և մեռնել կրօնի էութիւնը, նպատակն
ու բովանդակութիւնն է կազմում: Աստուծոյ
և մարդկային հոգու յարաբերութիւնը կա-
տարւում է ազօթքով, լինի անմահուհի, թէ
խօսքով, որ կրօնի մէջ ամենից էականն է:
Ով ազօթել չի կարող ճշմարտութեամբ, նա չէ
կարող կրօնական լինել բառի աղին իմաստով:
Որովհետեւ անբիծ, անարատ սրտով ազօթել
նշանակում է մեր ներքին հոգեկան աշխարհը
իւր բոլոր դադանիքներով Աստուծոյ առաջ
գնել, նշանակում է ամենաթանկագին զոհա-
բերութիւնն տնել, այսինքն Աստուծուն նուէր
բերել մեր սիրտը, մեր հոգին, ոչնչացնել մեր
հոն ու էութիւնը Աստուծու կամքը կատարե-
լու: Աստուծոյ համար ապրելու նպատակով:
Այսպիսի զոհաբերութիւնը միմիայն խորին
սիրուց կարող է բղխել ուստի և հասկանալի
պէտք է լինի թէ ինչու Տէրը ամենից մեծ
պատուէրը կրօնի մէջ դէպի Աստուած ունե-
ցած սէրն է համարում:

Այսպէս գտնելով ինքնին հասկանա-
լի է, որ մեր հասկացողութեամբ ազօթքի
բոլորները մարդու կեանքի մէջ ամենից նու-
րական ժամերն են և ուրիմն հայհոյութիւն
է այն կարծիքը, թէ ազօթելը ժամանակի
կորուստ է: Ազօթել և յոյսն Աստուծոյ վի-